ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն խորհրդային շրջանի պետական, կուսակցական, հասարակական գործիչ Վարդգես Համազասպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ.1/1 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդային շրջանի պետական, կուսակցական, հասարակական գործիչ, ՀԽՍՀ կառավարությանն առընթեր սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի երկարամյա նախագահ Վարդգես Համազասպյանը ծնվել է 1911թ. Էջմիածնում:

1930թ. անցել է կոմերիտական աշխատանքի: 1940թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և աշխատանքի անցել Մատենադարանում՝ որպես գիտական քարտուղար:

1947թ. ստացել է պատմական գիտությունների թեկնածուի աստիճան՝ «Թոնդրակեցիների շարժումը Հայաստանում» գիտական թեմայով:

1948թ. ընտրվել է Սովետական Հայաստանի գրողների միության պատասխանատու քարտուղար:

1951-1964թթ. եղել է Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտորը:

1954-1960թթ. ղեկավարել է նաև նույն ինստիտուտի Հայ ժողովրդի պատմության ամբիոնը:

1964-1968թթ. ղեկավարել է սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն:

Վարդգես Համազասպյանն անընդմեջ ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ:

1948թ. եղել է ՀԿԿ կենտկոմի անդամության թեկնածու, հետագայում՝ անդամ:

Վարդգես Համազասպյանը պարգևատրվել է Կարմիր դրոշ և Պատվո նշան շքանշաններով, բազմաթիվ մեդալներով և կառավարական պատվոգրերով:

Վարդգես Համազասպյանը մահացել է 1992թ. փետրվարի 9-ին:

Խորհրդային շրջանի պետական, կուսակցական, հասարակական գործիչ Վարդգես Համազասպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա հ.1/1 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վարդգես Համազասպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վարդգես Համազասպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ